

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ հմր 8 ՄԷՃ
Պատահաց 40 ՄԷՃ
Վերականգնող և Պոլսոյ 4 ՄԷՃ
Պատահաց 3 ՄԷՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ
Յանուարի ամիսը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ աւելարկութիւն կ'ըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՕԿՏՈՍՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջինս 1 սեպտ.

Վերջինս Վալենտ Բոսթր լրագրող Սեր-
փոյ կառավարութեան կողմէ երկաթուղ-
եաց շինութեան համար բանակցութիւն
ներ ըլլալուն լուրը տուտ կը հանէ:

1864ի փոխառութեան բաժիններուն
վիճակահանութեան առաջին պարզեւը
256 սէրիին 52 թիւը շահեցաւ:

Մարտի 30 օգոստ.

Բելախիտա կընդդիմանայ միշտ: Գեր-
մանական թիւղանօթակիր շոգենաները
Պիլիպոսի դեղը զննցին:

Մարտի 4 սեպտ.

Բելախիտայի մէջ պաշար մնաւ: Քար-
տոստը կորուստով ետ մղուեցան:

Քանի մը դատաւիճեցաւ տուած տե-
ղեկութեանց նայելով քաղաքն ամբողջա-
պէս հրդեհեալ է:

Վերջինս 2 սեպտ.

Բոսթրայի դործակալներուն կողմէ դոր-
ծուած խարդախութիւն մ'երեւան ելաւ:
1600 յանձնարարեալ նամակ գողցուե-
ր են:

Փարիզ 2 սեպտ.

Քարտոսեան թերթ մը Եանաթրի կոմ-
սին գրած նամակին քաղաքը կը հը-
րատարակէ: Երբ մէջ Եանաթրի կոմսը
Տոն Քարտոսի մտաւոր յաղթութեան
յոյսեր կուտայ:

Պերլին 2 սեպտ.

Սլոնին յաղթութեան տարեգարծը
մեծ հանդիսի կատարեցաւ: Զօրահա-
ղէս եղաւ կայսեր, կայսրուհւոյն և կայ-
սերազնայ առջև:

Սլոնինոյ ղեկավարին իր վիսպարերը
մատուց:

Լոնտոն 2 սեպտ

Օտոն Բոնո. 44 1/4
Քիսի 4863—
» 4869 56 1/2
» 4874 66
» 4872 80

Անգլ Բոնո. 92 3/4
Օտոն Բոնո. 92 3/4

Լոնտոն 2 սեպտ.

Բաւարի Միայնիկ—Օոլէան 8 1/8—1/4
» Ֆայր Տոլէան 5 1/8—1/4
Յախոտ 42000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջ. Սուլթանին հրամանաւ, կայ-
սերազնուն Բարձր. Սուրատ Եփէնտի
որդի Սէլահէտտին Եփէնտի, Սիւնի-
րէ Օուլթանի որդի Ալէսատին պէյ
և Ճէմիլէ Սուլթանի որդի Ճէլալէտ-
տին պէյ Բանկալթիի զինուորական
վարժողին աշակերտութեան տըր-
ւեցան:

Վերջ. Սուլթանին հրամանն ըրաւ որ
Տոլմա—Պահէի պալատին մէջ զըտ-
նուած փայտեայ գերաններուն տեղ

երկաթէ գերաններ դրուին և տախ-
տակամաններուն տեղ ալ սալայատակ
շինուին:

Սյո պատճառաւ իւր բնակու-
թիւնն երէկ Զրադանի պալատը փո-
խադրեց:

Ն. Կ. Վեհափառութիւնը Պէշիկթա-
շի թաւա պաշի փողոցին վերջին հըր-
կիզութեանէն աչրած տեղերուն մէկ
մասը որ կայսերական պալատին խիստ
մօտ է, իրեն համար գնել հրամայեց:
միանգամայն հրամանն ըրաւ որ յիշ-
եալ փողոցն 8 կանդուն ևս լայնաց
և տուններն ալ քարուկիր շինուին:

Պէշիկթաշի Հասէթի—Թաւա-
սի ըստած փողոցին հրկիզեալ աղ-
քատ բնակչաց ալ հինգական ոսկի
նպաստ շնորհեց:

Ռատիկանութեան նախարարն հե-
տեւեալ ազգը հրատարակեց:

«Ստաւագում է որ մայրաքաղա-
քիս մէջ պատահած հրդեհները, որոց
թիւը վերջին օրերս խիստ շատցաւ,
մերթ մուցուած կիտաւա սիկարայէ,
և մերթ ալ կաղի կամ ծծմբաւի բը-
ռնիկէն ծագում առած են: Նմա-
նապէս նշմարուած է որ դիւզ գնա-
ցող ընտանեաց պարտալ լծողցած
կամ վարձու տուելիք տներնակ
տանց մէջ ծագած հրդեհներուն
պատճառն ալ սովորաբար այս է որ
տանտէրը կամ տնոր մէկ մարդը բան
մ'առնելու կամ տունն աչքէ ան-
ցունելու գնացած ժամանակին, ան-
ներելի անհոգութեամբ մ'իրենց սի-
կարան հոն կընեն, և կը ձգեն
կերթան, քիչ մ'ետքը յանկարծ
տունը կը բռնկի:

Ռատիկանութեան նախարարն այս
աղբտալի պատահարաց առաջին տու-
նըլու համար վերջին օրերս պատ-
ւէր տուաւ բոլոր իմաններուն ու
Մուխթարներուն որ դատարկ տու-
ներուն մէջ պահպան գնել տան:

Սյո պատու էրը կայսերական հը-
րամանաւ կը կրկնէ Ռատիկանութիւ-
նը: Սյոսահաւ թաղերուն Մուխ-
թարները պիտի հոկեն որ դատարկ
տուններն յատուկ պահպաններու
հսկողութեան ներքեւ ըլլան գիշեր
ցերեկ:

Սյո հրամանին հակառակ վար-
ւածները պատասխանատու պիտի ըլ-
լան իշխանութեան առջև, եթէ հըր-
կիզութեան պակասութիւնն գէպը
մը պատահի:

Նմանապէս յատկաբար պատուէր
կը տրուի մայրաքաղաքիս և շրջա-
կայից բնակիչներուն, որ մեծ ուշադ-
րութիւն ընեն իրենց տուններուն մէջ
այն ամեն նիւթոց վրայ որ կրնան
հրդեհի պատճառ ըլլալ, ինչպէս են
փառած սիկարայի ծայրերը, կաղերը,
ծծմբաւ բուցիկները և այլն: Վերջա-
պէս պատուէր կը տրուի իրենց որ
գիշերները մինչև որ իրենց տան ա-

մեն կողմը չպաշտին և վտանգի պատ-
ճառ մը չկենայը չստուգեն, չպառ-
կին:

Ռատիկանութիւնը Պարսից դես-
պանատան հետ համաձայնութեամբ
մայրաքաղաքս գտնուած անգործ
և կասկածելի Պարսիկներն իրենց եր-
կիրը պիտի զրկէ:

Խաղաղ և Ամերիկայի լրագրաց
խօսքին նայելով, հեռագրութիւնը
նոր և խիստ կարեւոր յառաջդիմու-
թիւն մ'ըրեր է: Պարզ հնարք մը
գտնուեց է, որով միևնոյն հեռագ-
րական թիւը մի և նոյն վայրկենի մէջ
չորս ըւր մէկէն կրնայ տալ և ստա-
նալ, երկուքը զրկելով, երկուքն ալ
ստանալով:

Տէրութեան գաւառներէն և օ-
տար երկիրներէ մայրաքաղաքս դի-
մաղ բաղդախիւրներուն մէջ շատ
մ'ալ Յոն քահանայներ կան որք մայ-
րաքաղաքիս թաղերն ու շուկաները կը
պատին, և մերթ հրաշագործ սուրբի
մը պատկեր ցուցնելով, մերթ ալ ան-
գայ եկեղեցւոյ մ'անունով ստակ կը
քաղեն: Յունաց պատրիարքարանն
այս գայթակղական առուուորին
վերջ տալու համար խիստ միջոցներ
ձեռք առեր է յիշեալ քահանայից
դէմ, և զանոնք բռնելով իրենց եր-
կիրը զրկել որոշեր է:

Զօրեքաղաքի իրիկուն թօփհանէ
փայտէ դրգալ շինող Հաճի Օսման
աղա անուն ծերունի տաճիկ մ'ը
տանը մէջ ինքզինք կախած գտնը-
ւեցաւ: Սյո սպանութեան պատ-
ճառը քանի մ'օրէ 'ի վեր ծերունիին
վրայ տրուած սեւամաղձութիւնը կը
համարուի:

Երկու օր առաջ ալ Ահմէտ աղա
անուն երեսնամեայ տաճիկ մը Պէյ-
քօղ տուն մը ներկած ժամանակ ինք-
զինք կախեց:

Երեքաթի օրը Սիւրէֆէի Խոկէ-
լէսի մօտ թրամուէլի ընկերութեան
կառքերէն մին մարդ մը տապալե-
լով սոքը ջախջախեց:

Երէկ իրիկուն ժամը մէկին մի-
ջոցները Լանկա երկու Պաւլար ձի-
ադարման իրարու հետ կռուելով,
մին զմիւսն աւարճանալով զարկաւ:

Ոճրագործն անմիջապէս բռնը-
ւեցաւ: Բայց զարնուողն անյոյս վի-
ճակի մէջ է:

Յունական թիբօս լրագրին դա-
տը չօրեքաղաքի օրը նորէն ներկա-
յացաւ Կ. Պօլսոյ Պատժական տա-
նին, և այս անգամ խմբագրին փո-
խանորդը խօսելով, ջանաց հին և նոր

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց հանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագրի-
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լիս, Չինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համարու ծախքը չվճարուած նոս-
ժակ չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՍԸ ՈՒՄՈՒՄԻԷ

22 օգոստ. հինգաթի իրիկուն	49 23
23 օգոստ. ուրախ առաւօտ	
բացուեցաւ	48 24
կէս օր	48 20

Կ. Պոլիս 22 օգոստ.			
Սօսիթիէ ժէնէրալի բաժինք Սիգգիւրի 7			
« Փոստանալութեան »	»	4	16
Կ. Պոլսոյ Պանքային »	»	4	35
Քրէտի ժէնէրալ »	»	9	38
Քրէտի Օսթրո-Թուրք »	»	—	—
Երկաթուղեաց հին »	»	143	1/2
» նոր »	»	87	
Փոխ. 1863 »	»	328	
» 1865 »	»	330	
» 1869 »	»	279	
» 1872 »	»	80	
» 1873 »	»	264	
Թրսմուլ »	»	5	20

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՑ
22 ՕԳՈՍՏՈՍ

Անգղ. Կոնս. զուրուշ »	409, 8
Կ. Կոնս. Կոնս. »	87 18
Կ. Կոնս. Կոնս. »	89 40
Գործար. »	51, 26
Հինգ ֆրանք »	—
Հինգրոց »	404 20
Պոլիս »	426 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երեսփոխանական ժողովոյ անկարգ և անարդիւն վիճակին գլխաւոր պատճառներէն մին ալ ատենաւորական կանոն մը չունենալն էր, որոյ պէտքը քանի տարիէ ի վեր զգալի ըլլալով խնդրոյ կարգէն անցած, բայց ուրիշ կարեւոր խնդրոյ պէս անլուծանելի մնացած է մինչև այսօր։ Ամեն Ս. Պատրիարք հայրը, գոնէ ժողովին այս անհրաժեշտ պէտքը ժամ առաջ լցնելու և զայն բարեկարգ վիճակի մը վերածելու գովելի փափաքով, խնդրէր Երես. Ռուսինեան էֆէնտիին որ Եւրոպական ժողովոյ ներքին կանոնադրութիւններէն քաղելով մեր Ընդհ. ժողովին յարմար ծրագիր մը պատրաստէ, որ պէս զի Երեսփոխանութիւնն ամեն բանէ առաջ անոր զբաղի իւր յառաջիկայ նստին մէջ, և զայն քննելով ու հաստատելով նախ ինքզինք կանոնաւորէ և ապա ուրիշ կարեւոր խնդրոյ լուծման ձեռնարկէ։

Ռուսինեան էֆէնտին ալ Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութիւնն ընդունելով 112 յօդուածէ բաղկացեալ կանոնադրութիւն մը շինեալ և բաւական օրինակ տալով տալով Ազգ. Երեսփոխանաց զրկած է ի քննութիւն։

Առաջ երեսփոխանական ժողովը ներքին կանոնադրութեան երկու ծրագիր կուենայ, որոց մին արդէն Ընդհ. ժողովոյ մէջ երկար վիճարանութեանց նիւթ եղած և մի քանի յօդուածներն ընդունուելէ ետեւ մասնաժողովոյ մը քննութեան յանձնուած է։ Սրբազան հարկ իւրով, որ Ընդհ. ժողովը կամ այս ծրագրին նախապատուութիւն տալով միւսն ետ ձգէ, կամ երկուքը մէկէն ձեռնհաս մասնաժողովոյ մը քննութեան յանձնելով, պարզ և դիւրագործադրելի կանոնադրութիւն մը պատրաստել ասոյ անյապաղ, և առանց ճշմամբ թմախնդրութեանց վաւերացնելով գործադրէ։

Ըստ մեր կարծեաց, Ռուսինեան էֆէնտին շինած ծրագրին աւելի կատարեալ ըլլալով, նախապատուութեան արժանի է, բայց այս պարագայի մէջ ալ դարձեալ ձեռնհաս մասնաժողովոյ մը քննութեանն ու սրբազանութեանը յանձնել հարկ է, որ յովհետեւ փորձն արդէն շատ իսկ

ցուցած է, որ այս տեսակ ծրագրաց քննութիւնն Ընդհ. ժողովոյ մէջ կատարել անհնարին է։

Կը սիրենք յուսալ որ Ազգային Երեսփոխանութիւնը վերջապէս ներքին կանոնադրութեան մը տիրանալով, իր ներկայ անկանոն վիճակէն ելնէ և բարեկարգ ու ակնածելի դերք մ' ստանայ։

Կը յիշեն ընթերցողք թէ Ռուսիոյ Ազգային վարժարանաց խնդրոյն վերայ խօսք մ' ընելու, չնորհալալ իրաւով միայն որ թաւրքիւյ Հայք Ազգիկն և Եկեղեցւոյ իրաւանց և արտօնութեանց պահպանութեան համար իր բրած բարենպաստ ջանից համակրութիւն կը ցուցնեն։

Նորին Սրբազնութիւնն յուլիս 25 թուով պատասխան մը գրած է, որոյ մէջ՝ առանց բռն խնդրոյն վերայ խօսք մ' ընելու, չնորհալալ իրաւով միայն որ թաւրքիւյ Հայք Ազգիկն և Եկեղեցւոյ իրաւանց և արտօնութեանց պահպանութեան համար իր բրած բարենպաստ ջանից համակրութիւն կը ցուցնեն։

Վեհ. Կաթողիկոսին այս լուծութեան վրայ, որ ակամայ կը թուի, մեր կողմանէ խորհրդածութիւն ընել աւելորդ կը համարինք։

Իզմիրի Արեւելեան Մամուլ ամսատետրին հետեւեալ ըւրջ խորհրդածութիւնը կընէ վերջին յուլիս 5 ընդհ. ժողովին վրայ։

Կեղրոնական Ընդհ. ժողովը շարունակ օր մ' անցնող, օր մը՝ որ իր կենաց ելի է ոչ վտանգ մեծ արտաբերուաւ։ Անտառակոյս յուլիս 5 ի տօնու անցքը բոլոր դատաւարաց վրայ խիստ վատ ազդեցութիւն մը ըրած է, առանց մեզի դարմանք տալու։ Մեր աչաց առջև Կեղր. Ընդհ. ժողովն բաւական ատենէ ի վեր կորուսած է իր մեծ նշանակութիւնը և պարզապէս Կ. Պոլսոյ ազգայնաց ժողովաւ կը դարձած է։ Յուս. ի սիրտ կը յայտարարենք այս կարծիքը մենք որ ստեղծուող գործած ենք Կեղր. Ընդհ. ժողովը հեղինակութեան մեծ կարեւորութիւնը հուշակել և երբեմն նոյն Դիակ երեսփոխանաց զգացնել, Բայց ժողով մը՝ որ իր մեծ և վսեմ նպատակին չեղելով տեղական կրից և մասնաւորութեանց ենթակայ կը մնայ, ժողով մը՝ որ ընդհանրութեան իրաւանց անկողնի՝ փոռն նկատուանքով և վճարով կ'զբաղի, ժողով մը՝ որ ամէն կենսական խնդիր՝ դատարարութեան, տրոց, հարստահարութեան, պատասխանատուութեան, ինչ կ'ըսենք, նոյն իսկ իր համարաւորութեան դերացոյն պաշտօնին իրաւ թողով մանր մանր դաւերու մէջ կը թաւալի, ժողով մը՝ որ մի քանի անոսն և կատարել երեսփոխանաց ներգործութեան կը հպատակի, և զրեթէ անոնց ձեռքը խաղալիք դառնալով՝ ոչ նախորդ փորձերէն կ'զգտտանայ, ոչ հասարակաց կարծիքէն կ'ազդուի, ոչ բարձր բարոյականութեան և հաստատութեան թեմէն դատ կ'ընծայէ, ժողով մը՝ որ թող իր կազմակերպութեան եղանակին որ Սահմանադրութեան մէկ վրիպակն է, զուրկ է մեծապէս այն տարրերէն՝ որ ժողովրդեան խոհական, գործօն, խնայական և նիւթական կողմերը կը ներկայացնեն, և որ օր ըստ օր ծոցն ունեցած քանի մ' ընտիր անձնակազմութիւններն ալ կորուսելով՝ լոկ ընտրական գործողութիւններ կատարելու և վաւերելու պաշտօն կը վարէ, այնպիսի ժողով մը՝ եթէ ոչ ըստ իրաւանց, թէ և այս ալ վիճելի է, իրաւակալ ազգին երեսփոխանութիւնը լինելէ գաղաթած կը սեպուի։

Արեւելեան այս ժողովը լուծուելի, ուրիշ մ'ընտրուելի՝ ոչ, այդ չէ բոլորովին մեր միտքը։ Վստի զի եթէ լուծուելի, յաջորդեալ եթէ ոչ յուսեցոյն տարրերով իր նախորդին թերեւ յար և նման անձերով երեսան պիտի գայ, օրինակ և միտք տրամադրութիւնը նոյնը մնալով։ Ուրեմն ինչ է մեր նպատակը։ Այս հարցին պատասխան տալէն առաջ՝ պարտաւոր ենք ըսել որ Յուլիս 5 ի անցքը չէ

զիստեւորապէս մեր գիտողութիւնները թելադրողն անցք մը՝ որ Ընդհ. ժողովոյ նշանաւոր անդործութեան հետ բաղդատելով մեզի ինքնին թեթեւ գիտեալ մը կ'երևի, որ իրաց այս կարգին մէջ կրնայ կրկնուիլ, այլ ազգին վիճակը Սահմանադրութեան առջև։

Ազգային Սահմանադրութիւնն 1860 ին փորձ մ'էր, հին դրութեան զեղծումները բառնալու ճիգ մը։ 1863 ին փորձն իրական երեւոյթ մ' ընդունեց և Տրութեան կողմէ վաւերացեալ Սահմանադրութեան դրժագրութիւնը սկսաւ։ Երկու երեք տարուան ընթացք չառած՝ ակն յայտնի երեցաւ որ հին գեղծումներուն վրայ նոր տեսակ գեղծումներ բարդեցան, և ազգը միայն օրինաց անուշով, ձեւերով, ընտրութիւններով, վճարով զրաղեցաւ, և իր անկալութիւնները չիրացան, Այս աղմուկն, այս չարժեքները թէ և յառաջիկայութեան քայլ մ'էր, բայց իրաւանց և մասնաւոր պարտուց ճանաչումը չէր, բուն յառաջադիւթութիւն չէր, և անտարակոյս այս քայլն ալ պիտի չառնուր եթէ ազգային լրագրութիւնն, որ ատեն մ'աւելի զգոյշ, աւելի խոհական և ազգու էր, և քանի մը գործունեաց և հանձարեղ գրականներ՝ որ դեռ ևս ետանդ ունէին, ժողովրդեան սիրտն ու միտքը չբանային իր շահացը վրայ։ Այլապէս մ'որ աշխարհակար կամ Քաղաքական ժողովը եկեղեցականին կամ Արժանական ժողովին իւստական անհեթեթ պահանջները մերժեց և անոր պաշտօնն եկեղեցւոյ մէջ սահմանելու ջանաց։ Այս վրայ ծագեցաւ այն մեծ փոթորիկն որ Սահմանադրութիւնն ընկղմեց, եւ ատիէ առաջ Ընդհ. ժողովոյ անդամներ՝ դեռ ևս պայմանաւոր չհասած՝ Սահմանադրութեան վերաբերութեան մէջ զարման փնտելու ելան։ Կանխաձայն էր այս փոթորը, ազնու ապետական դասուն հարուածն էր այս յեղաշրջումը։ Բայց զգալի, անձնական ճշմարտութիւն մը կը յայտնէր, այն է Սահմանադրութեան ազգին վիճակին և սովորութեանց յարմարընելու պէտքը։ Այս արտաքին շտապ, որ առաջին մեծ սխալ մ'էր, մարտի 20 ի վարչային պատահարը փութացուց, օրինաց յարգը բաւաւալով, և կէս կանգուն թողուց միայն Ընդհ. ժողովը՝ որ վերջին մասնաժողով մը կազմելով՝ անոր յանձնեց Բ. Վերան յանձնաժողովին նոր յորինած Սահմանադրութեան վերաբերութեան գործը։ Տարիներ անցան և Ռուսինեան էֆէնտին ծրագրին Ընդհ. ժողովին եկաւ։ Բայց այս ժողովը՝ մասնական ընտրութիւններով՝ այնպիսի տարրեր ընդունելէր, որ կամ նախորդ պարագաներուն անուղեղան, կամ իր օրէնադրական ոյժին վրայ վատաճ՝ մերժեց ծրագրին իրեւ դատարարութիւն պատահարի անհարապատ հետեւութիւն և ինչն իր մէջ հին Սահմանադրութիւնը վերադննել որոնց։ Արդէն Երեսփոխան ընտրուելէր պատրիարք՝ սահմանադրական սկզբանց վրայ ուստելով։ Ազգը կամ Ընդհ. ժողովն այս երկբորդ մեծ սխալներէն ըրած էր՝ վերաբերութեան թեմէն առաջ՝ որու պայմանաւոր անցք էր՝ պատրիարք ընտրելով և այս պատեհ առթիւ ձեռքէ հանելով։ Ամենուն յայտնի է թէ Ընդհ. ժողովն ինչպէս վերաբերեց Սահմանադրութիւնը Հայ Ա. յօդուածը ընցուց երեք տարուան մէջ և մնացածները մոտացաւ ի սպաս։ Վստի զի ժամանակին Գաղաթական ժողովն անոնց վրայ հրահանգներ կը հեղինակէր։ Այս կամաւոր զանցաւորութիւն և միանգամայն ազգին աւերութիւն մ'էր, վստի զի Սահմանադրութիւնը վերադննել իր չինդ տարիէն, և տարին զրեթէ տասն եղել էր։ Երեսփոխան այս ազգին աւերութեան զոհ ընկաւ։ Գոնէ այնուհետեւ վերաբերութեան ճիգ մը տեսնուէր և դատն փորձառութիւնը մեզի դատ լինէր, ոչ։ Սահմանադրութիւնը չվերաբերեալ նոր պատրիարքի ընտրութեան ձեռնարկեցաւ։ Երբեմն Պատրիարքին նոյնպէս մեզի ստեղծ պիտի նստի այս երբորդ մեծ սխալներէն՝ որու նախորդ պարագաներն ու գաւերը իրեւ աւելորդ կը համարուի, և որու հետեւեցին ևս արդի վրդապիւնն ու անտեսութիւնը։

Երբ մի անգամ օրինաց հիմնական մասնաւոր անհրաժեշտ մի տրամադրութիւնը կ'ընդունի՝ ապօրինաւորութիւնները իրարու կը յաջորդեն։ Ստանալով ազգեր իսկ իրենց օրէնքը կատարելագործելի կը հրատարակեն, ուր մնաց մենք որ օրէնք մ'ունենք, և այս օրէնքն՝ որու մի շատ թերութիւնները տեսապէս և փորձով ի վաղուց հաստատուած են, այս օրէնքը վերադննելու կը դառնալովն, և ապա կը զարմանալով թէ ինչո՞ւ մեր վարչութիւնն առաւ և անշարժ է, ինչո՞ւ ազգը չզարգանար, ինչո՞ւ անդադար կադ ու կոխ պակաս չեն թէ ժողովներու ծոցն և թէ ժողովրդեան ըստ մեզ՝ ահա այս ապօրին յապաղումն է այն ամբողջութեան և յետադիմութեան պատճառն, և միանգամայն դաւաճել կրից և աննշան կուսակցութիւններու գրգռութիւն։ Ասոնց զէմ՝ քարոզներ, հաշտութեան փորձեր, պաշտօնական ծանուցումներ, ազգարարութիւններ, դատաւարանի ըստ պատեալի, դաւաճի և դաւաճի երկուցներ, ժողովոյ լուծումներ, բոլորն ալ կիսագարմաններ են, անօգուտ են, և եթէ Ս. Պատրիարքը հիմնական գեղը իւր խանութեանն արդիւնաւորութիւնն և արժանի տիրութիւնը կուղէ, պարտաւոր է Սահմանադրութեան վերաբերութիւնը փութացնել, Ընդհ. ժողովոյ պակասը լեցնել, կոշտ ընելով ամեն դատու դործունեաց, ձեռնհաս, հանձարեղ, ազգու և պարկեշտ ազգայնաց, որ իրեն ընտրելի ներկային կամ եթէ ընտրուին՝ չը մերժեն, այլ դան իրեն աջակից և խորհրդատու դառնան և ազգը վերականգնեն։

Մեծ. Տոքթոր Մարթիան անցեալ շաբթու դարմանք պատմեց մեզ թէ Սրբազան պատմագիրներէ քաղած Հայկական պատմութեան հատուածներուն Ա. Տեառէն օրինակ մ'Օրագրոյ խմբագրին զբոսի է յատուկ նամակաւ մը, բայց Օրագրոյ խմբագրութիւնը չընդունելով մերժել է։

Այս տարգիլ գործն Օրագիր ուրանալով, Տոքթոր Մարթիան հետեւեալ նամակը գրած է մեզ.

Պ. Կ. Իսթիւքան, խմբագրողեալ Մասիս լրագրոյ։

Օրագրի լրագրոյն գործին նկատմամբ պարտիմ յայտնել թէ իմ նամակաւ ու տետրը խմբագրին ձեռքը հասած չէ, որովհետեւ ինչեւ լրագրին ցրուելը, որուն յանձնակց է նամակն ու տետրը չէ ընդունել ըսելով թէ առանց խմբագրին հրամանին չընտրելու, և այդ հրամանն ալ չէ տրուելու։

2 սեպտ. 1874 Ա. Տ. ՄԱՐԹՄԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Անուանի դաղանարոյժ Պ. Ռօպինըն՝ այս օրերս իր գաղաններն երեք շաբաթներով Ամերիկայի վիսնաթի քաղաք կը փոխադրէր։

Շոգ երեսներէն միայն մէջ՝ ուրիշ գաղաններէ զատ՝ վիսնաթի փոխ մ'ընտրեց իր մը կային վերջինը վիսնաթի Գաղա իւրեւրու միջոց մը գտնելով, գնաց իւր գրարդի փոխ վրայ յարձակեցաւ, և կատարել կրաւ մ'սկսաւ երկու գաղանաց մէջ։ Շոգ երեսը վստի զի գրարդի քաղաքով, միւս երկու շոգ երեսներն օգնութեան հասան և առաջինն մէջ գտնուած ուղեւորներն իրենց մէջ փոխադրելէ ետեւ, երեք շաբաթներ ևս կառուց գաղաններն իրարմէ գատու համար։ Քանիցս անպատու փորձեր ընելէ ետեւ, Պ. Ռօպինըն՝ անպատճառ վերջ տալ ուղեւոր կուսին, որ շատ փնտաւոր էր իրեն, որովհետեւ երկու գաղաններն ինչ որ իրենց ձանրուն վրայ գտնուէին՝ կը ջախջախէին կամ գետը կը նետէին, հը-

